

նետիկ 1675-ին: Ան կը վկայէ, որ, արդարեւ, Վենետիկ Հալէպի վրայ Հնդկաստանի հետ ունեցած իր առևտուրը երկար ատենէ ի վեր կորսնցուցած էր, այուհանդերձ դեռ կը հայթայթէ եւ կ'արտադրէ Արեւելքի համար պէտք եղած ապրանքը: Քանտիայի պատերազմէն առաջ, Վենետիկ, օրինակի համար, կ'արտադրէր 2,600 ծրար կերպաս, մինչեւ 1675-ին հազիւ 500 ծրար, «որ կ'ուղարկէն Թուրքիա, սակէ դատ կը զրկեն մետաքսներ, ոսկի, արծաթ, բիւրեղ ապակի, եւն, որոնցմէ ոմանք Թուրքիայէն աւելի ներս Պարսկաստան, Արաբիա եւ Հայաստան կը մտնան»: 14)

Բնական է, որ Ժէ դարուն Հայաստանի մէջ, ինչ առևտուր որ կար, Հայոց ձեռքն էր: Յակոբ Կարնեցի (1622-1662) կը վկայէ, որ Կարնոյ մէջ «վաճառականք ի չորից կողմանց հայոց ազգէս անթիւ կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել եւ ի ծախել փառչայ (կտոր լաթեղէն) եւ ապրչումեղէն (մետաքսեղէն) ցեղ ու ցեղ դումաշ (կերպաս) զանաւուղ, չուխայ, կտուեղէն եւ քթան, անթիւ եւ բազում ջալահիր (մարգարիտ) քար՝ արմատս (աղամանդ) եւ յետալ (կայծ), զմբութ (գմբուխտ), լալ (մեղեսիկ), սամուր (սամոյր մուշտակ) եւ վարչախ եւ ամենայն մազեղէն տարին բոլոր յայտնի գնեն եւ վաճառեն»: 15):

Հոս աւելորդ չէ արձանագրել փոքր ծանօթութիւն մը, որ մեղի կուտայ Ժէ դարուն Արեւելք պտրտած Անգլիացի ուղեգիր Ճան Տրայլըր (1672-1681): «Լարիս Լազուլի, որ ուսմկարար Հայկական քար կը կոչուի, ու այդ շրջանին բնիկ եղած կը նկատուի, իրականին մէջ հոն (Հայաստան) կը բերուի Կասպից ծովէն անդին բնակող թաթարներէն, եւ երբ անոնք իրր գետպաններ Շահին կուզան (որով-

հետեւ իրենց ազգէն ուրիշներու թոյլատրուած չէ աշխարհը շրջել, ոչ ալ օտարներուն օրինաւոր է իրենց երկիրը մտնել), այս պատճառաւ կարող չեն (Լարիս Լազուլին) հոս ու հոն արտածել, երբ (ուղեւորութեան արգելքներուն) կը համակերպին: Այսուհանդերձ կը պատահի, որ այս դժուարութեանց եւ սեղմումներուն ներքեւ իսկ հայերը երբեմն փորձեն ձեռք բերել դայն (Լարիս Լազուլի), զայն գտնելու համար առանց չղարձած քար թողելու: իսկ անգամ մը ձեռք բերելէ վերջ, անոնք անկէ կը ծծեն այնքան շահ, որքան որ իրենց ձեռնարկութեան վտանգը կը հաճին արժեցնել: Որով՝ անոնք քիչ խղճմտանք կը գործածեն: Եւ ատոր համար է, որ (Լարիս Լազուլին) այդքան բարձր գիներով կը ծախուի Եւրոպացիներուն»: 16)

Ուրեմն, Լարիս Լազուլիի (յաղուարդ-լաճվերտ) մենաշնորհն էր հայ գոհարավաճառներուն այն աստիճան, որ քարը Ժէ դարուն Եւրոպացի գոհարագէտներուն մօտ ծանօթ էր իրր Հայկական Քար, հակառակ որ քար բնիկ Հայաստանի արտադրութիւն մը չէր, այլ Թիւրքեստանէն կը բերուէր:

Ժէ դարու Հայ գոհարավաճառի նկարագրին մէկ խիստ յատկանշական եւ կարեւոր ստուերագիծն ունինք նոյնիսկ նշանաւոր գոհարավաճառ եւ ձեռագրավաճառ Անգլիացիէ մը, որ ծնած է 1641 Ապրիլ 29-ին եւ 1704-ի ձմեռը մեռած եւ որ իր յիշատակներուն եւ ուղեւորութեանց երկհատոր գործը տպագրած է Լոնտոն, 1733-ին Էտուարտ Պրաուն կեղծանունով: Բուն անունը, որ այնքան ալ կարեւոր չէ, չկրցայ ճշդել: 1733-ի այս հրատարակութիւնը, որ ինքնին շատ հազուադիւր է, ունիմ իմ թանգարան-մատենադարանիս մէջ, որմէ օգտուելով մեզ հետաքրքրող մասը կը ներկայացնեմ:

Էտուարտ Պրաուն 1675-ին Ռօզէդայի (Եգիպտոս) մէջ կը հանդիպի նշանաւոր եւ իրա-

14) A collection of Voyages and Travels. — Thomas Osborne. — London, 1745, Vol. I, p. 453:

15) «Տեղեկագիր Վերին Հայոց», — հրատ. Կ. Կոստանդեան, Վաղարշապատ, 1903, էջ 37:

16) A New Account of East India and Persia. — London, 1698, p. 332: